ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Գայանե Միխաիլի Հարությունյանի «Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

1. **Ատենախոսության թեմայի արդիականությունը.**

Սոցիալական շարժումների ուսումնասիրությունն արդի հայաստանյան հասարակությունում առանձնահատուկ արդիականություն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական տեսանկյունից: Հետանկախության շրջանից ի վեր Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել սոցիալական, քաղաքական, տնտեսական և մշակութային խորքային վերափոխումներ, որոնք ձևավորել են նոր սոցիալական հարաբերություններ, փոխել հանրային մասնակցության ձևերը և նպաստել տարբեր սոցիալական խմբերի ինքնակազմակերպման նոր մեխանիզմների առաջացմանը: Այս գործընթացների համատեքստում սոցիալական շարժումները դարձել են հասարակական դժգոհության արտահայտման, հանրային շահերի պաշտպանության և սոցիալական փոփոխությունների խթանման կարևոր գործիքներ:

Հայաստանյան իրականությունում հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում ակտիվացել են տարբեր բնույթի սոցիալական շարժումներ՝ բնապահպանական, ֆեմինիստական, ուրբանիստական, քաղաքացիական և այլ, որոնք էական ազդեցություն են ունեցել հանրային օրակարգի ձևավորման, որոշումների կայացման գործընթացների և քաղաքացիական հասարակության զարգացման վրա: Միաժամանակ, չնայած սոցիալական շարժումների աճող նշանակությանը, հայաստանյան սոցիոլոգիական գիտության շրջանակներում դրանց համակարգային և համապարփակ ուսումնասիրությունները շարունակում են սահմանափակ մնալ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արդի հայաստանյան հասարակությունում ձևավորվել է հակասական իրավիճակ. մի կողմից առկա է հանրային դժգոհության և սոցիալական բողոքի զգալի ներուժ, մյուս կողմից՝ սոցիալական շարժումները հաճախ չեն կարողանում վերածվել կայուն և լայնամասշտաբ հանրային մոբիլիզացիայի կամ հասնել համակարգային

փոփոխությունների: Այս առումով սոցիալական շարժումների կառուցվածքի, դինամիկայի, մոբիլիզացիոն մեխանիզմների, արդյունավետության և խոչընդոտող գործոնների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հայաստանյան հասարակությունում սոցիալական գործընթացների տրամաբանությունը հասկանալու համար:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ աշխատանքում ուսումնասիրված ֆեմինիստական, ուրբանիստական և էկոլոգիական շարժումները հնարավորություն են տալիս բացահայտելու ժամանակակից հայաստանյան հասարակության արժեքային համակարգի, քաղաքացիական ինքնագիտակցության, սոցիալական կապիտալի և հանրային մասնակցության առանձնահատկությունները: Հետազոտությունը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ սոցիալական շարժումները դիտարկվում են ոչ միայն որպես սոցիալական բողոքի դրսևորումներ, այլև որպես պետական ինստիտուտների թերի կամ ոչ արդյունավետ գործառույթների կոմպենսացման մեխանիզմներ:

Աշխատանքի կիրառական արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել սոցիալական քաղաքականությունների մշակման, սոցիալական կոնֆլիկտների կառավարման, հանրային բողոքի գործընթացների կանխատեսման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված ռազմավարությունների մշակման ընթացքում:

Գիտական արդիականության տեսանկյունից ատենախոսությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ սոցիալական շարժումների վերաբերյալ առկա միջազգային տեսական մոտեցումները հիմնականում մշակվել են արևմտյան հասարակությունների փորձի հիման վրա և ոչ միշտ են լիարժեք բացատրում հետխորհրդային և մասնավորապես հայաստանյան հասարակություններում տեղի ունեցող սոցիալական գործընթացները: Այս առումով աշխատանքը ոչ միայն համակարգում և քննադատական վերլուծության է ենթարկում սոցիալական շարժումները մեկնաբանող հիմնական տեսությունները, այլև առաջարկում է հայաստանյան իրականության առանձնահատկություններից բխող նոր մեկնաբանություններ: Հետազոտությունը հնարավորություն է տալիս ընդլայնելու սոցիալական շարժումների սոցիոլոգիական ուսումնասիրման տեսական շրջանակները՝ բացահայտելով արդի հայաստանյան հասարակությանը բնորոշ սոցիալական շարժումների կառուցվածքային, արժեքային և մոբիլիզացիոն առանձնահատկությունները:

2. **Ատենախոսության նպատակն** է պարզել արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների դինամիկան, բնութագրիչները, ինչպես նաև դրանց հաջողությունը/ձախողումը պայմանավորող սոցիալ-քաղաքական գործոնները:

3. **Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը**

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների համալիր և համակարգային ուսումնասիրությամբ: Աշխատանքում քննադատական վերլուծության են ենթարկվել սոցիալական շարժումները մեկնաբանող հիմնական տեսական մոտեցումները, առաջարկվել է սոցիալական շարժման այլընտրանքային սահմանում, բացահայտվել են հայաստանյան սոցիալական շարժումների կառուցվածքային և դինամիկ առանձնահատկությունները:

Հեղինակին հաջողվել է առանձնացնել արդի հայաստանյան հասարակությանը բնորոշ «ֆրագմենտար» սոցիալական շարժման տեսակը, ինչպես նաև վերհանել սոցիալական շարժումների կոմպենսատոր գործառույթը՝ որպես պետական ինստիտուտների թերի գործառույթների լրացման մեխանիզմ: Գիտական նորույթներից է նաև սոցիալական շարժումների հաջողության պայմանների վերլուծությունը և Չ. Թիլլիի WUNC մոդելը լրացնող հավելյալ փոփոխականների առաջարկումը:

Աշխատանքի եզրակացությունների հիմնավորվածությունը պայմանավորված է կիրառված մեթոդաբանական մոտեցումների և հետազոտական մեթոդների համադրությամբ: Հետազոտության ընթացքում կիրառվել են խորին և նարատիվ հարցազրույցների, փաստաթղթերի վերլուծության, դեպքի հետազոտման մեթոդները, ինչպես նաև իրականացվել է քանակական տվյալների երկրորդային վերլուծություն: Տեսական և էմպիրիկ նյութի համադրությունը հնարավորություն է տվել հեղինակին գիտականորեն հիմնավորված կերպով վերլուծել ֆեմինիստական, էկոլոգիական և ուրբանիստական շարժումների առանձնահատկությունները արդի հայաստանյան հասարակությունում:

Աշխատանքի գիտական նորույթներից կարելի է առանձնացնել՝

2. **Ատենախոսության նպատակն** է պարզել արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների դինամիկան, բնութագրիչները, ինչպես նաև դրանց հաջողությունը/ձախողումը պայմանավորող սոցիալ-քաղաքական գործոնները:

3. **Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը**

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների համալիր և համակարգային ուսումնասիրությամբ: Աշխատանքում քննադատական վերլուծության են ենթարկվել սոցիալական շարժումները մեկնաբանող հիմնական տեսական մոտեցումները, առաջարկվել է սոցիալական շարժման այլընտրանքային սահմանում, բացահայտվել են հայաստանյան սոցիալական շարժումների կառուցվածքային և դինամիկ առանձնահատկությունները:

Հեղինակին հաջողվել է առանձնացնել արդի հայաստանյան հասարակությանը բնորոշ «ֆրագմենտար» սոցիալական շարժման տեսակը, ինչպես նաև վերհանել սոցիալական շարժումների կոմպենսատոր գործառույթը՝ որպես պետական ինստիտուտների թերի գործառույթների լրացման մեխանիզմ: Գիտական նորույթներից է նաև սոցիալական շարժումների հաջողության պայմանների վերլուծությունը և Չ. Թիլլիի WUNC մոդելը լրացնող հավելյալ փոփոխականների առաջարկումը:

Աշխատանքի եզրակացությունների հիմնավորվածությունը պայմանավորված է կիրառված մեթոդաբանական մոտեցումների և հետազոտական մեթոդների համադրությամբ: Հետազոտության ընթացքում կիրառվել են խորին և նարատիվ հարցազրույցների, փաստաթղթերի վերլուծության, դեպքի հետազոտման մեթոդները, ինչպես նաև իրականացվել է քանակական տվյալների երկրորդային վերլուծություն: Տեսական և էմպիրիկ նյութի համադրությունը հնարավորություն է տվել հեղինակին գիտականորեն հիմնավորված կերպով վերլուծել ֆեմինիստական, էկոլոգիական և ուրբանիստական շարժումների առանձնահատկությունները արդի հայաստանյան հասարակությունում:

Աշխատանքի գիտական նորույթներից կարելի է առանձնացնել՝

1. Վերհանվել է սոցիալական շարժումների կոմպենսատոր գործառույթը՝ իբրև պետության կողմից չիրականացված կամ թերի իրականացված գործառույթների բացի լրացում,

2. Առանձնացվել է և բնութագրվել արդի հայաստանյան հասարակությանը բնորոշ՝ «ֆրագմենտար» սոցիալական շարժման տեսակը,

3. Բացահայտվել են և դասակարգվել արդի հայաստանյան հասարակությունում սոցիալական շարժումների ծավալման խոչընդոտող գործոնները:

4. **Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը**

Ատենախոսության արդյունքները ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Գիտական տեսանկյունից աշխատանքը նպաստում է սոցիալական շարժումների սոցիոլոգիական ուսումնասիրման տեսական շրջանակների ընդլայնմանը հայաստանյան համատեքստում՝ համալրելով տվյալ թեմայով առկա սահմանափակ հետազոտությունները: Աշխատանքում ներկայացված տեսական ընդհանրացումները և վերլուծական մոտեցումները կարող են հիմք հանդիսանալ սոցիալական շարժումների վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների համար:

Գործնական տեսանկյունից հետազոտության արդյունքները կարող են կիրառվել սոցիալական քաղաքականությունների մշակման, հանրային բողոքի և սոցիալական կոնֆլիկտների կառավարման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության զարգացման ռազմավարությունների մշակման գործընթացներում: Աշխատանքը կարող է օգտակար լինել հանրային կառավարման ոլորտի մասնագետների, հետազոտողների, ինչպես նաև քաղաքացիական ակտիվիստների համար՝ սոցիալական շարժումների արդյունավետության և մոբիլիզացիոն մեխանիզմների առավել լավ ըմբռնման տեսանկյունից:

5. **Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածական մասից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 174 էջ:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է հետազոտության արդիականությունը, սահմանել աշխատանքի նպատակն ու խնդիրները, ներկայացրել թեմայի գիտական մշակվածության աստիճանը՝ անդրադառնալով նաև հայ հեղինակների աշխատություններին: Բացի այդ, ներկայացվել են ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքերը, կիրառված հետազոտական մեթոդները, աշխատանքի

գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Առաջին գլխում հեղինակը ներկայացնում է սոցիալական շարժումների սահմանումները, դրանց կառուցվածքն ու գործառույթները, տեսակներն ու զարգացման դինամիկան: Միաժամանակ անդրադարձ է կատարվում այն մեթոդներին և մեթոդաբանություններին, որոնք հնարավորություն են տալիս առավել արդյունավետ ուսումնասիրել սոցիալական շարժումները:

Երկրորդ գլխում հեղինակը մանրամասն ուսումնասիրում է հայաստանյան իրականությունում դրսևորված սոցիալական շարժումների երեք տիպերը՝ ուրբանիստական, գենդերային և էկոլոգիական՝ հիմնվելով դեպքի ուսումնասիրության մեթոդաբանության վրա: Գլխում ներկայացվում և վերլուծվում է յուրաքանչյուր դեպքը՝ բացահայտելով դրանց հաջողության և ձախողման պատճառները՝ հեղինակի առաջարկած տեսական մոդելի շրջանակում: Բացի այդ, սոցիալական շարժումների ձևավորման և գործունեության միջավայրը հայաստանյան իրականությունում առավել ամբողջական հասկանալու նպատակով, հեղինակը իրականացրել է նաև երկրորդային տվյալների քանակական վերլուծություն:

Օգտագործված գրականության ցանկում առկա է 96 աղբյուր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով:

6. **Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսության վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները և հարցադրումները.

1. Ատենախոսության առաջին գլուխը ներառում է ծավալուն տեսական նյութ: Ավելի նպատակահարմար կլիներ այն ներկայացնել ավելի խտացված և առավել վերլուծական ձևաչափով:
2. Աշխատանքում բացակայում են տվյալների հավաքագրման գործիքները, որոնք նպատակահարմար կլիներ ներառել հավելվածում:
3. Աշխատանքում ներկայացված որոշ եզրակացություններ կարող էին համալրվել նաև համեմատական միջազգային օրինակներով, ինչը հնարավորություն կտար առավել ընդգծել հետազոտության արդյունքների կիրառական և համադրական արժեքը:

Նշված դիտողություններն ու առաջարկությունները չեն արժեզրկում աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գայանե Միխաիլի Հարությունյանի «Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են գիտակիրառական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ:

Ատենախոսության հիմնական դրույթները արդիական են և հրատարակված են 8 հոդվածներում հեղինակավոր գիտական տեղական և միջազգային ամսագրերում:

Ատենախոսության սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ *Գայանե Միխաիլի Հարությունյանի «Սոցիալական շարժումներն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)»* թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին: Հեղինակը արժանի է ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,
սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Կ. Սահակյան

18.05.2026

Դրոշմուր Հ.Գ. Հարությունյանի
ստորագրությունը հավաստում եմ

փաստաբան Ա/ա Հ.Ա.